

ՀԱՆԴԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՄԵԾԱՄԵԾ ՔԱՂԱՔՔ

Քաղաքային կենաց և մասնաւորապէս մեծ քաղաքաց աճումն, մեր դարուն անտեսական և ընկերական կարեւորագոյն գործերէն մին է: Իմաստասէրք, անտեսագէտք, քաղաքագէտք ներթոյնեամբ կը հետազօտեն անոր պատճառքը, կը ջանան ստուգել և գուշակել անոր հետեւութիւնքը. կան ու մանք՝ որ կ'երեւակայեն յապագայ մեծ յառաջդիմութիւնս, և ոմանք ալ՝ որ կը խռովին մտածելով այն անպատեհութեանց որ կրնան յառաջ գալ անկէ: Տէրութիւնն ալ այս մեծ գործոյս վրայ իր ազդեցութիւնը կը գործածէ, և զայն հաստատող և յեղափոխիչ բնական պատճառաց վրայ՝ կը յաւելու ուրիշ արուեստականներ: Այլ կենաց և ընկերական կազմութեան օրէնքն, ինչպէս բնութեանն, կրնան կերպափոխիլ, եթէ մարդկային խցմտանաց ազդեցութիւնն չի հակառակի: Քաղաքք, որք են իբրեւ արդի կենաց հզօր մեծամեծ կեդրոնք, այնպիսի զօրութեամբ կը յառաջագիմեն ընդ մէջ անսահման աշխուժից երեւակայութեան և տխուր գուշակութեանց, որոնց, մինչդեռ ոչ ոք կը համարձակի հաստատուն սահման մը դնել, բազումք կը հետազօտեն զօրէնս, զեղանակս, զարդիւնս:

Քանի որ պաշտպանութեան և անձնական պահպանութեան կռիւն կար, և որով, ինչպէս կ'ըսէ Հերպէրդ Սթենսըր, պատերազմական զրոյմն յաղթեց զօրացաւ ընկերական յօրինուածութեան մէջ, քաղաքք անդատին ի բնէ պաշտպանութեան տեղիք եղան: Մարդկային ժողովմանց առաջին կերպարանքը, զոր Հռովմայեցիք գտան անդր քան

զԱլպանս, ամերիկեան ռահմիրոյք՝ ի դաշտավայրս, խուզարկութեամբ՝ Ափրիկէի ներսերն, որմով ցանկեալ տեղիք կամ ցցապատնէք էին, լճային դիւղք, անմատոյց լերանց գագաթունք: Միջին դարու դղեակք, գիւղօրէք, պտրսպապատ քաղաքք՝ ամուր տեղիք էին, և ի Հռովմայ աշխարհակալեալ երկիրնեւրուն մէջ, ինչպէս այսօր յԱնգլիացւոյ և ի Ռուսաց գրաւածներուն մէջ, շատ անգամ քաղաքն իր առաջին ծագումը զինուորական բանակէն կ'առնու: Նաև անոնք ալ ներքին կռուոյց մէջ, թագաւորի, մեծամեծաց, եպիսկոպոսաց ապաստանի տեղիք էին. կը ծառայէին պատսպարան ըլլալու նորածին վաճառականութեան, պաշտպանելու յօտար ձեռաց, լուս և իրենց ձեռաց տակ հրապատակ ունենալու համար, զանոնք՝ որ իրենց զօրութեամբն զայն չէին կրնար ընել: Առաջին վաճառանոցք շինուեցան քաղաքաց որմոց հովանւոյն տակ, արուարձանաց մէջ. և մի և նոյն ատեն տակաւ ընկերական նոր կարգ մը կը սկսի հաստատիլ, որ նորանոր գործարանաց պէտք ունի և տարբեր զարգացում մը կը սահմանէ: Այն ատեն ընկերական ազդեցութիւնը կը կեդրոնանայ քաղաքի մէջ, որ Տէրութիւն ըլլալու պատիւը կ'ունենայ. քաղաքային կեանքն՝ քաղաքականութեան հետ համանուն կ'ըլլայ, և քաղաքագիտութիւնն ուրիշ բան չէ՝ բայց եթէ քաղաքը բարեւոյ վարելու արուեստն: Ո՛րչափ ժողովուրդք անցան երկրիս վրայէն, Ասիոյ մեծամեծ միապետութեանց այսպիսի տեղական յիշատակներ՝ հանդերձ իրենց մայրաքաղաքք՝ թողլէն յառաջ, և երկու քա.

դաքաց անուանց մէջ, Աթէնքի և Հռովմայ, հին աշխարհին կրկին հզօրագոյն քաղաքականութիւնը 'ի մի բովանդակելէն յառաջ:

Վասն զի այս մեծամեծ ժողովմանց երևոյթաւ, եթէ մեր օրերն աւելի հաստատուն կը տեսնուի, բնդհանուր յառաջագիմութեան հետ միաձայն ընթացող, աւելի տևողական և բարեբար, նոր երևոյթ չէ: Հնագիտութեան համբերատար և հմուտ խուզարկութիւնք վերականգնեցին աւելի քան զմի հին մայրաքաղաք, ընդարձակ, բազմամորդ, շքեղ, զարմանալարէն նաև յոյս զանազան ժողովրդոց, առաւել քան զմերայինս: Բաբելոն, իր ծաղկաւէտ բարգաւաճանաց մէջ, Բաբելոն պէս եղաւ կէտ ըզճից և նպատակ դժնդկագոյն լինամանաց. կայսերական Հռովմն լոնտրայէն նուազ ընդարձակ չէր և անոր համաշխարհի ազդեցութիւնը ունէր: Այլ այժմեան ընկերութիւնն այնպէս հիմնովին տարբեր է 'ի հնոյն, որ այս կերպով փոխեցան գաղափարք, միտութիւնք, պէտք, ուսումը. և փոփոխումն այնպիսի ազդեցութիւն բրաւ նոյն իսկ անհատական կազմածոյն և իրեն ընկերական միահամուռ զօրութեանց վրայ, որ ընդունայն ճիգն է քանի մը քաղաքային կեդրոնաց զարմանալի եղանակաւ մեծնալուն երևոյթը ուզել մեկնելը՝ այն պատճառք՝ որ սահմանեցին հին մայրաքաղաքաց յօրինուածութիւնը:

Վտղեմի պերճութեան պատմութիւնն հրաշալեօք լի է, այլ բաղդատելով՝ սակաւ կրնան դիմանալ մեր սոյուրենքուն առջև ներկայացեալ մեծագոյն ծաւալմանց: Մայրաքաղաքաց ժողովմանց, բերոց ազնուագործութեանց, և մարդկեղէն ուժոյն զոգցես անսահման բազմապատկութեանց՝ հարստութեան ձեռքով եղած զարգացումն՝ այժմեան գործ մ'է: Հարստութեան համեմատութեամբ փոխեցան նաև իրեն բաշխմանց գործիներն, մանաւանդ ինչ որ բերոց կը վերաբերին: Ով որ կը բաղդատէ արդի առևտրական չարժու մը դարէ մը կամ կէս դարէ մ'առաջ

եղածին հետ, որուն վրայ վիճակագրութեան առաջին քննութիւնքն կատարուեցան, զարմացեալ կը մնայ, գոգցես անհաշիւ: Տարբերութիւնն ալ աւելի անհուն կ'երևի բազում միջնորդաց անյայտ ըլլալովն. մեծամեծ մթերանոցք, անբաւ պահեստի տեղիք, և շահավաճառուց բոլորովին նոր կազմութիւն մը փոխանակեց հնոյն, այնպէս որ հազիւ անոր հետքը թողուց: Այս նոր կազմութեան կեդրոն և զոգցես առանձնակատարէզ են՝ աւելի դիպաւոր տեղ շինուած քաղաքք, մեծամեծ նաւահան, դիստք ծովու, այն տեղերն ուր աւելի կարելի է կենդրոնանալ, տեղափոխել, լայնածաւալ, բազմամարդ և ճոխ գաւառի մը բերոց բաշխուիլ, և անոնք որ կ'ընծայեն յարաբերութեանց մեծագոյն դիրութիւնա բնակեալ երկիրներու մեծագոյն տարածութեան հետ: Հօս անդադար յորդութեանց ճանապարհաւ ժողովրդեան աճումն ստուգիւ տարապայման է. և ռամկապետական զարգացման կը համապատասխանեն շինուածապետութեան զարգացումն, առ հասարակ տնտեսական յառաջագիմութիւնն, և քաղաքային և քաղաքագիտական աճեցուն ազդեցութիւնն, զոր այս մեծամեծ կեդրոնք կը գործածեն Տէրութեան մէջ:

Հաղորդակցութեան արագ և տնտեսական միջոցք, աւելի հեշտ և աւելի առողջարար ըրին նաև մեծամեծ ժողովմանը: Մեծ քաղաքաց կեդրոնն, ուր կենդանութիւնն աւելի հզօր է, մօտեցած կ'ըլլայ երկուց ծայրից, և իրենց զարգացումն կրնայ լաւ ևս հետեւիլ, ըստ բաղդատութեան ֆուլի, մեծ ծառի մը ձևոյն: Ժողովրդեան, վասն խընայութեան ժամանակի և աշխատանաց, իրարու վրայ խուլած ապրելու կարեւորութիւնն, 'ի մեծ մնաս առողջութեան և բարոյականին, կընուագի կամ անհետ կ'ըլլայ. անհատաւորէ՝ այն մարդկեղէն մրջիւնացեց եղծմանէն յառաջ եկած օգուտն, որ զրեթէ բոլոր արդի մեծամեծ քաղաքաց կենդրոնք կը ձևացնէին: Կրնայ ըսուիլ ապա

Նաև, որ նոյն իսկ ժողովրդեան ժողովման օգտամատուցող պատճառքն, թոյլ կու տան իրեն նաև ապրելու ամենայն հանգստեամբ, նիւթական և բարոյական անհուն չահիւք:

Մեծամեծ քաղաքք՝ արուեստագիտութեանց, կամ՝ գէթ շատ արուեստագիտութեանց, բնականագոյն տեղիքն են, որոնք իրենց զարգացման կարևոր գործող մը կ'ըլլան: Կը հակին մանաւանդ մերձենալու մեծաճիւղ վաճառատեղեաց, հօն մօտ ունենալ սպառողաց կարելի եղած միծագոյն թիւը և իրենց յաւելուածոյ բերքը բաշխող պատշաճ գործիները. և պէտք ունին նաև այն մտաւորական և նիւթական օժանդակութեանց, զոր միայն մեծ կեդրոն մը կրնայ ընձեռել, կամ լաւ ևս կ'ընձեռէ: Կայ հօն օժանդակութեանց փոխանաւումն, միացուածոց աւելի դիւրութիւն օգտակար ընելն, մեծագոյն յաճախութիւն և լաւագոյն բազկաց ընտրութիւն. հօն գործաւորն իր արուեստական հանճարը զարգացնելու եղանակ ունի, և եթէ ընդհանրապէս կեանքն աւելի սիրելի է, մեծագոյնք են նաև անոր միւլթարանքն և այն դիւրութիւնքը՝ որ զարդիս գրեթէ հասարակաց ժառանգութիւն մը կը ձևացընեն:

Սակայն մեր ժամանակն ոչ միայն նշանաւոր է հասարակաց և սոսկական հարստութեան զարգացմամբ, առևտրական գործօնէութեամբ, արուեստագիտական յառաջդիմութեամբ, այլ նաև այս գործողաց հետ միացած է աւելի գերազանց և պիտու դաստիարակութիւն մը, և ամենքն 'ի միասին կ'ընծայեն նոր զգացմունս, նոր գաղափարս, նոր պիտոյս: Արդէն գեղը ապրողներէն շատերն, արք չափաւոր ըղձիւք, հայրենի աւանդութեանց հետեւողք, այն նոր միւլթարութեանց հարկաւորութիւնը կը զգան, որ գոգցես ուղղակի յարաբերութիւն ունին մարդկային ժողովմանց կարևորութեան հետ: Փոքր կալուածատեարք, որ իրենց բնիկ գեղին մէջ ազդեցութիւն մ'ունէին, զայն կորուսին, և նախամեծար կը հա-

մարին կեալ 'ի քաղաքի: Կալուածական հարստութիւնն՝ միայն և գլխաւորն չէ. անոր համար քաղաքք չեն միայն, ինչպէս ժամանակ մը, ընկերութեան ուղղիչ գործարանքն. հօն կը զարգանան արուեստագիտական, առևտրական, հասարակաց եկամուտէն ապրող դասք, և այլ բազումք. որոնց համար քաղաքն, մանաւանդ մեծ քաղաքքն, պիտոյք մ'է, և գործօնէութեան, բաղդի, և նաև լոկ բերկրութեանց՝ կը թուի աւելի ընդարձակ ասպարէզ մը: Բարձրագոյն դաստիարակութեան մը պիտոյքն, պերճութեան հրապոյրքն, հաղորդակցութեանց արագութիւնն՝ որով նաև 'ի հեռուստ դիւրին է հոգալ սեփական շահերը, և ագարակային գործոց պարզութիւնն, օրինակն, որով կրնայ գրուցուիլ որ այս կենդրոնատեղիքն, իրրեկ մեծամեծ մագնիսը, իրենց զանգուածոյն համեմատական ձգողութիւն մը կը գործածեն, այս ամեն բանն նոյն արդեանց ձեռնառու կ'ըլլայ: Եւ մեծամեծ քաղաքաց դէպ 'ի զարգացումն դիմելու առած ձևոյն անփոյթ չեն ըլլար, հասարակաց չքեղ ճեմելեօք, ամբոխաժողով հրապարակք, լայնատարր պարտիզովք, դաստաւերաօք. որով, քաղաքային կենաց ընձեռող ամենայն դիւրութեանց և օժանդակութեանց հետ մէկտեղ, ունին նաև գեղջկական կենաց հաճոյքը, որ կամեցողին կարծել կու տայ թէ ամբօխէն հեռու կը գտնուի և դաշտաց մաքուր և պայծառ օդը կը շնչէ:

Այս տնտեսական և բարոյական բընութեամբ, որու ազդեցութիւնն գրեթէ համաշխարհական է և հաստատուն, գործողաց հետ կը միանան քաղաքագիտական մասնաւոր գործողք և արուեստական պատճառք, որոնք այլ և այլ չափով կը գործեն: Այժմեան վարչութիւնք շատ աւելի բազմամասն են, գործարանաց մեծագոյն թիւ մ'ունին, աւելի յոգնաթիւ դիւանակալութիւն մը կը գործածեն: Փոքր Տէրութիւնք անհետ եղան և ազգային Տէրութեանց մէջ խառնուեցան. արդի մայրաքաղա-

քաց մէջ ժողովեալ կը դաժնուին պաշտօնք և անձինք՝ նախ ցրուեալք, և ոչ միայն անոնք որ Տէրութեան յատուկ կազմութիւնը կը յօրինեն, այլ նաև անոնք որ ասոր հետ աւելի յաճախ յաբարեութիւն ունին, մեծամեծ ընկերութիւնք, որ նոր և հզօրագոյն ոգւոյ մը ընկերակցութեան արտադրութիւն են։ Եւ որչափ Տէրութեան մը սահմանք կը լայնին, կամ՝ աշխարհակալութեանց կամ՝ գաղթակութեանց միջոցաւ կ'աճին, այնչափ իր մայրաքաղաքին ժողովուրդը կը յաւելու։ Քաղաքագիտական աղատութեանց զարգացումն, երկայն խաղաղութիւն մը, ընդհանուր ապահովութեան յաւելումն, նոյն արգասեաց ձեռնտու կ'ըլլան։

Հուսկ յետոյ աւելցրենք արուեստական պատճառքը, որ զանազանք են և բազմապատիկ ազդեցութիւններ ունին։ Գլխի՛կ Լէզլի, օրինակ իմն, գիտեր է այժմեան ազգաց հարկատուական գրութեան ազդեցութիւնը՝ արուեստից կեդրոնացման վրայ, որով և մեծամեծ քաղաքաց ամման վրայ։ Հօս ձեռագիրական արուեստք կը գտնեն մաքսական մեծագոյն դիւրութիւններ, պատեհութիւն ընկերագրութեան, պահեստի տեղոյ միջերանոցներ, և բոլոր մէկալ ուրիշ դիւրութիւնքն՝ որոնց օգուտը մասնաւորապէս գանձային (fisc) գրութիւնն իմանալ կու տայ։ Երկուստեք արուեստական գարգացումն, որ երբեմն արուեստական է, կը հաւաքէ ի՛նքզինքն քաղաքն բաղադրութիւն գործաւորաց, որոց ետեմէն կու գան փոքր վաճառականք, և առանց հաստատուն բնակութեան ժողովրդեան ամբոխ մը, որ քաղաքին կեանքը օգտակար և հեշտին կը գտնէ, և հօն կը հաստատուի։ Նաև զինուորական ծառայութիւնն, կորովի մարդկան յաճախագուճութիւն մը վարձեցընելով՝ օրինաց և պիտոյից քաղաքին, նպաստամատոյց կ'ըլլայ բառնալոյ՝ ի գիւղից կենսական զօրութիւններ, որ մասնաւորապէս կը ղեկուին մեծագոյն կեդրոնաց մէջ։

* *

Երբ մեծամեծ քաղաքաց վրայ կը խօսուի, և բարեբաղդութեան ծայրագոյն պատճառքը կը քննուին, մտածութիւնն անգէն կ'ընթացայ ի լոնտրա, ի Բարիլ, յայլ եւրոպական մայրաքաղաքս, և այն ամերիկեան քաղաքըս, որոց զարմանալի աճումն մտացածին բան մ'ունի, կարծես իմն թէ անոնք թղթէ յինուած են թատերաց անխօս անձանց ժողովրդոց համար, նման անոց զորս Բոգէմբին կը յինէր, զմեծն կատարինէ Բիւզանդիոնի ճամբուն վրայ տանելով։ Այլ իրականապէս Ամերիկոյ Միացեալ Նահանգներէն դուրս ալ կան մեծամեծ քաղաքք, որ պանչելի աճում մ'ունեցան և կը խօստանան քաջայոյս ապագայ մը, առանց քաղաքական գործող մ'ունենալու։ Եթէ Լիվրբուլ և Մենչեսթըր ի Մեծն Բրիտանիա, Լիոն և Մարսիլիա ի Փրանկիա, Համպուրկ և Մոնազոյ ի Գերմանիա չեն կրնար մրցիլ՝ տնտեսական նպաստաւոր դրից վրայ կառուցեալ մայրաքաղաքաց հետ, ոչ ումք օտար պիտի երևի եթէ օր մը Պարչելլոնա գերազանցէ զՄատրիտ. և ամենքը կը ճանչնան որ Միլան և Ճենովա, օրինակ իմն, ապառնի աճման այնպիսի գործողներ ունին, որ կը պակսին թագաւորութեան մայրաքաղաքին, և այս մեծաւ մասամբ մեզի բարեբաղդութիւն է։

Չկայ ինչ՝ որ զուգակշռի Լոնտրայի մեծութեան, նաև Բարիլու, կամ Միացեալ Նահանգաց մեծամեծ քաղաքաց անկուն հրաշալի երազութեան։ Դիտուած է, որ կարկինի մը ծայրն հաստատելով ի լոնտրա և երկրագնդին վրայ բանալով, միւս ծայրին ներսն կը բովանդակէ կիսագնդին մեծագոյն մասը՝ յորում աւելի են մարդաբնակ երկիրներն. և անգուգական դիրքն կը բացայայտէ մասամբ մը անոր անհուն բաղդը։ Աշխարհին փարթամագոյն քաղաքն է, և ամենէն աւելի խառնիխառն վարեալ և տնտեսեալն. ամենայն մեծայաղթ գործք հօն ի գլուխ կ'եննեն,

հսկայագործ փոխանակութիւնք, լայնատարր ձեռնարկութիւնք, և ընդարձակածաւալ երեսին վրայ, որ իրեն աւելի գաւառի կերպարանք մը կու տայ, այնպիսի կերպով կը պատատին խորհրդարանին վճիռք, վարչութեան Պաշտօնք, տեղական ընկերութիւնք և ժողովք, որ կը յուսահատցնէ ոչ միայն թոհոհակաճան դանդուածոյն մէջ կարող մը գնել ուզող մը, այլ և որ որ կամենայ համառօտագործ նկարագրել զայն, խառնակութիւնն նպաստամատոյց եղաւ աճման, յորմէ մեծաւ մասամբ յառաջ կու գայ, կամ չխափանեց, այլ հազիւ դանդաղեցուց շինուած ապետութեան մեծամեծ նորաձեւութիւնքը։ Ատտիտն ալ պիտի չճանչնայ իր փոքր Լոնտրան, և ոչ Աննա Թագուհին իր ապարտնից չըջակայքը։ շինապետաց մուրճն կանգ չառաւ Գեմբլը Պարի առջև, և ոչ Նորդէմպերլանտի չեմն, թէպէտ և չկայ ազգ՝ որուն քով նմանօրինակ յարգ և պատիւ ունենալ պատմութիւնն և զայն կենդացընող յիշատակք։ Յամին 1597 Պագոն կը ներկայացընէր Օրինաց ծրագիր մը ընդդէմ անմարդութեան քաղաքին։ «Չեմ ուզեր, կ'ըսէր, որ Լոնտրայի համար ալ կարենան օր մ'ըսել, այժմէն ախտոյս յոք Տրոյաւ եղև, և դառնայ ըլլայ Անգլիա մարդագետին մը, հովիւ մը և շուն մը»։ Փութով այս վախերն անհետ կ'ըլլան։ Լոնտրա Գրոմաւելի ժամանակ քանի մը հարիւր հազարաց բնակիչ ունէր, նախընտեան պատերազմաց միջոց հասաւ միլիոնի։ և հիմայ արդէն չորս միլիոնն անցած է։ Եւրոպիոյ երկրորդակարգ Տէրութեանց մեծագոյն մասն չունին այսչափ մեծաթիւ ժողովուրդք։

Բայց այս բանն չի զարմացընէր երկրի մը մէջ ուր հրաշալի աճումն ունեցան նաև Լիվրքուլ, Մէնչսթըր, Պրմինկէմ, Լիսա, Շէֆֆիլտ, Պրիստըլ, Պրէսթօրտ, և այլ բազումք։ ուր ժողովրդեան 52 առ հարիւրն արդ քաղաքային կեդրոնաց մէջ ժողովեալ կ'ապրին։ Մասնաւորապէս հօն կը տեսնուի, թէ ինչպէս այս՝ դործարանական յա-

ռալագիմութեան օրինաց բնական կիրարկութիւն մ'է։ Ժողովրդեան պէս քաղաքականութիւնն ալ կը խտանայ և բազմապատկեալ զօրութեան մը պէս կը գործէ։ Կը նուագի դաշտաց աշխատութեան կարևոր մկանական և ջղային զօրութեան քանակութիւնն, և մեքենական զօրութեանց պիտոյքը կը յաւելու։ Յայն սակաւ, ինչպէս կ'ըսէ Աքէֆլ, արդէն մեկը կը տեսնենք, յԱնգլիա, որ ոչ միայն ժողովրդեան մեծագոյն մաս մը կը գաղթի 'ի գեղջէ 'ի քաղաք, այլ թէ նոյն իսկ ազգային մեծ դաստիարակութեան ուղղիչ զօրութիւնքն՝ քաղաքային ոգիէ մը միշտ արծարծեալ են։

Փրանկիոյ մայրաքաղաքն քան զայլ լոցն աւելի արագութեամբ և արմատաբար այլափոխեցաւ։ իր այլափոխութիւնն, օրինակի ազդեցութեամբ եղաւ մանաւանդ այլոց այլափոխութեան որոշիչ պատճառներուն մէջէն։ Հօն մասնաւորապէս գործով ստուգուեցաւ, թէ ինչպէս մեր պիտոյից զարգացումն և մեր կարողութեան յառաջագիմութիւնն կը պահանջեն մարդկան մեծաւ մեծ բնակութեանց ընդարձակութիւն և իրենց զարդարանքը, և որչափ օգտակար է, ամենայն նկատմամբ, առողջ պահել այս մեծ կեդրոնքը, լայն մուտք բանալ, մոռցանել օդ, ջուր, լոյս, ծաւալել ճոխութիւն, ուսումն, ճաշակ։ Լուգուիկիայ ԺԴի Թագաւորութեան ժամանակ, Բարիդ 200,000է 'ի 500,000 աճեր էր։ 'ի 1831 ունէր 786,000 և միայն 1848ին ատեններն անցաւ բնակչոք զմիլիոնը։ Ինքնակալութեան ժամանակ արագագոյն եղաւ իր աճումն, անթերի այլափոխութիւն, ծախքն ահաբա, այնպէս որ գլեց քան զընաւ քաղաքանդուոյն նախատեսութիւն։ Նաև յետոյ հանապազօրոգեց չարժումն, և դեռ հիմայ ոչ որ կրնայ ըսել ուր պիտի կանգ առնու այս ժողովրդեան աճեցուն կուտակութիւնն։ Վասն զի ինչ կերպով որ ընկղմեցան գեղեր, որոնք այս դարուս առաջին քառորդին մէջ դեռ բաց դաշտավայրի մէջ կը գընուէին, այսօր իրենց վերջին ժամուն

մօտ ըլլալը կ'իմանան . և արդարև Բա-
րիզու արուարձանք են՝ Պուլոնյը, Նէօյ-
լի, Լըվալլուա-Բիերրէ, և ուրիշ գիւղք,
որ հետու կը համարուէին :

Լիոնի և Մարսիլայի աճումն կը ցու-
ցնէ թէ ինչպէս կը սխալէր Դոքուէլ,
երբ կը համարէր թէ մեծամեծ քաղա-
քաց աճման վրայ՝ վարչութեան ձևոյն
և առ հասարակ քաղաքական գործու-
ղաց ազդեցութիւնն մեծ է : Լիոն, հա-
րաւային փրանկիոյ երկրագործական և
արուեստագիտական կարևորագոյն կե-
դրոնն, և Մարսիլա նոյն փրանկիոյ և
բովանդակ Միջերկրականի մեծագոյն
նաւահանգիստն, տեսան իրենց ժողո-
վըրդեան աճումը համեմատութեամբ
Բարիզինէն աւելի արագ, ինչպէս նաև
չիւնուած պետական մեծամեծ ձեռն-
արկութեանց մէջ միջեցան ընդ մայ-
րաքաղաքին, յաղթեցին արուեստա-
կան և ելևմտական ահագին դժուարու-
թեանց, Տէրութեան անազանագոյն և
սահմանափակ գործակցութեամբ մը :
Ի 1789 ունէր Լիոն 139,000 բնակիչ,
և հիմայ մօտ է առ 350,000 . Մարսի-
լիա աճեցաւ յ70,000է ց318,000 . ու-
րիշ վեց մեծ քաղաքք, որոնք այս եր-
կուքին հետ մէկտեղ մեծ յեղափոխու-
թեան ժամանակ հազիւ կէս միլիոն
բնակիչ ունէին, այժմիկ միահամուռ
նոյն իսկ մայրաքաղաքին բնակչաց թիւը
կ'անցնին, թէպէտ և անոր քաղաքական
և բնկերական ազդեցութիւնը չունե-
նան, ինչպէս կը հանգիստի ուրիշ Տէ-
րութեանց միջի մեծամեծ քաղաքաց,
այս կողմանէ աւելի բաղդաւորը :

Գերմանիա տեսաւ Պեռլինի արագա-
պէս աճումը, որ դեռ 'ի 1725ին ունէր
66,000 բնակիչ, և աճեցաւ ց136,137
'ի 1775 : ց219,968 'ի 1825, ց434,250
'ի 1855, ց1,122,385 'ի 1880, յերկրի
ոչ թէ դոյզնագիւտ այլ միակ օրինակ :
Այլ նաև Պալիերայի Մոնագոն, ուր
բնակիչք աւելի քան երկուց դարուց
միջոց դեռ չէին կրկնապատկած, 'ի
20,000է 1600ին ատեններն ց34,277
'ի 1794, մեր դարուն մէջ տեսաւ իր
աճման և ևս արագութիւնը, հասնելով

հարիւր հազար բնակչաց 1850ին մի-
ջոցներն, անցնելով 'ի 1880 զ230,000,
առանց հաշուելու արուարձանքը : Այս-
պէս վիէննա իր 18 արուարձաններով
հասաւ միլիոն բնակչաց, մինչդեռ 'ի
սկիզբն դարուս կը համէր ամբողջ
300,000 . բայց նաև Բրաւկա, Դրիէսդ-
և մասնաւորապէս Մաճառաց մայրաքա-
ղաքն, նշանաւոր աճումն ունեցան :

Ի բաց թողունք եւրոպական ուրիշ
քաղաքները և թողունք նաև վասն զա-
նազան կարևոր պատճառաց, Միացեալ
Նահանգիները, որ բոլորովին տարա-
պայման վիճակաց մէջ կը գտնուին, և
աշխարհի ուրիշ մասիններն ալ, որոց
քաղաքականութիւնն մերինէն այնչափ
տարբեր է : Վասն զի կ'անագանանք մեր
ուշադրութիւնը հաստատելու իտալա-
կան մեծամեծ քաղաքաց վրայ, և առ-
անձինն Միլանու : Մենք արդարև պի-
տի տեսնենք, որ չկայ քաղաք՝ ուր տըն-
տեսական երևոյթն, որուն վրայ պէտք
է ուշ դնենք, աւելի նպաստաւոր պայ-
մաններով կատարուի որպէս 'ի Միլան,
իմանալով նոյն իսկ մայրաքաղաքն, ու-
րուն շարժումն դանդաղ և խափա-
նուած է ձախողակ մասնական պարա-
զաներով, որոնց մէջ երբեք արդի մեծ
մայրաքաղաք մը գտնուած չէ :

Ի 1871ին աշխարհամարն, Նաբոլիի
ժողովրդեան վրայ մեծ աճում մը չե-
րեցուց . սակայն աճեցաւ մինչև զաւա-
ռին սահմանադրութիւնը և անդր ևս տա-
րածական ժողովման մը ճանապարհաւ,
այսինքն է սահմանակից բնակչաց, Եւ-
ռոյս բանս եղաւ, թէպէտ և Նաբոլի
սկսեր է կրել հարաւային զաւառաց
մէջ, որոց ինքն գլուխ էր, 'ի գործ վա-
րեալ ձգողութեան զօրութեան հե-
տևութիւնը՝ յայլոց մեծամեծ կեդրո-
նաց, մասնաւորապէս 'ի Պարիէ, և կե-
նաց այն արուեստական կեդրոնացման,
որ հօն սկսեր էր ժողովիլ, յամբ՝ բայց
յառաջախաղաց և բեղուն շահիւք՝ ան-
չատման : Ժողովրդեան ջղերն ցնցելով,
արուեստագիտական ոգին զարթուցա-
նելով, լաւագոյն երկրագործները տա-
րածելով, մեծագոյն խրախուսանք ծո-

վային ճանապարհները երթևեկելով, Նաբոլի ալ կրնայ ունենալ աւելի հաստատուն և բեղնաւոր աճում մը քան զայն՝ զոր ոչ ոք կ'աւաղէ:

Հռովմ' արդէն տամնամետյ ժամանակի մէջ այնպէս աճեցաւ, որ բոլորովին այլ կերպարանք կ'ընծայէ: Պէտք է յիշել, որ երբեմն ներսն և շրջակայքն այնպէս ամայացաւ, մինչև 30,000էն աւելի բնակիչ չունէր, ստուերք թափառականք՝ երկու կամ աւելի միլիոնաց քաղաքի մ'անհուն աւերակաց մէջ: Ի 1600 հասաւ 100,000 բնակչաց. այլ յետոյ աւելի քան զերկու դար և ոչ իսկ կրկնապատկեցաւ ժողովուրդն: Առաջին պաշտօնական աշխարհամարն, եղեալ 'ի 1871, համբեց հօն 226,000 բնակիչ: Հիմայ կ'անցնի զերեք հարիւր հազարը, և եթէ անկալութիւն մը չունի արուարձանեայ միաւորութեանց, բայց կը տեսնէ ամեն տարի զինքը շրջապատող անապատին երթալով նուազին կամ կենդանանալն և ամեն կողմանէ խալիոյ յառաջադիմութեան և զօրութեան ընտիր տարերաց զեղումը:

Նոյն երևոյթը կը տեսնենք 'ի Բալերմոյ, 'ի Ճենովա, նաև 'ի ձեռն միաւորութեան սահմանակից բնակչաց. 'ի Ֆիրենցէ, թէպէտ և կանդ առած առժամանակեայ մայրաքաղաքին կորըստեամբ, որուն այսպէս մերձաւոր ըլլալն՝ թերևս սակաւք կը նախատեսէին. 'ի Դուրին, թէպէտ և յառաջագոյն ևս կորսնցուցած էր պատիւը և շահը: Այլ մեր մեծամեծ քաղաքաց մէջէն չկայ մէջը՝ յորում այս աճման բնական գործողք՝ յաւանց խառնիչ պատճառի մը՝ ներգործեն իրենց ազդեցութիւնը, ինչպէս 'ի Միլան, Հօս քաղաքագիտութիւնն հազիւ անուղղակի և հեռու ազդեցութիւն մ'ունի. արտաքոյ կարդի պատահար մը չի հանգիպիր, ժամանակաւոր և տարապայման պատճառ մը՝ աւելի տեական և ապահով ազդեցութիւն մը ներգործողաց վրայ չի գար միանար: Նաև արտաքոյ խալիոյ թերևս սակաւ քաղաքք կան, յորս դւրաքոյն ըլլայ 'ի զանազան բնական գոր-

ծողաց իրենց աճման վրայ ներգործեալ ազդեցութիւնը ստուգեն:

Միլան 1861ին ունէր 196,000 բնակիչ, և 'ի 1871 հազիւ 199,000, որով իտալական քաղաքաց մէջ հինգերորդ տեղը կը բռնէր: Բայց եթէ հին շրջապատին միջի յաւելումը՝ եղեր էր 1,48 առ հարիւր, կըլլար 23 առ հարիւր հաւելումը նաև Գորբի Սանդիները: Միլան 'ի 239,000 բնակչաց կ'առաւելուր 'ի 292,000, և այսօր երեք հարիւր հազարը կ'անցնի, միջերով Հռովմայ հետ երկրորդ տեղոյն վրայ, ռամկապետօրէն միայն ստորին 'ի Նաբոլիէ: Գորբի Սանդիներուն միաւորութիւն, հիմա զայն ամենքը կը ճանչնան, արդէն արդեամբք կատարուած կցորդութեան մը օրինաւոր հաստատութիւնն եղաւ. այն տարածման յամբ՝ բայց յառաջադէմ շարժման, զոր Միլանու բոլոր պատմութիւնը կը ցուցնէր, կամածին մատակարարական ընտրութենէ մը դուրս աւրուեստական արդեւքն վերցաւ: Արդէն երեք անգամ հարկ եղեր էր Միլանու՝ ընդարձակել իր շրջապատը, կենաց բարեկեցութենէն, տուրեաւոյց և շահուց մեծագոյն դիւրութենէն ձգեալ արուարձանեայքը ընդունելու համար: Ամենայն ազատական խլրտմունք, վարչութիւն մը ամենայն ազատագոյն գործք՝ ճանչցեր և փորձեր էին զքաղաքը ընդարձակելու, անոր զօրութիւնքը աճեցնելու կարեւորութիւնը, մինչդեռ օտար տէրութիւնն կը մտածէր զինքը վարսնալից և տկար պահելու: Աւանալինից միաւորութիւնն նոր դարազրուի մ'եղաւ Միլանու համար, և մինչդեռ անոր յառաջադիմութեան նորաստոր մը զուգնէր տուաւ, պատճառեց միանգամայն շինուած ապետութեան մեծ զարգացում մը, կանգ առած միայն կեդրոնէն չհեռանալու վախով, որուն այն չափ նախանձաւոր չեն ուրիշ քաղաքք, և երկիրներուն և շինուածոց թանկութիւնն, որ միայն Եւրոպոյ և Ամերիկայի մայրաքաղաքաց մէջ կը տեսնուի: Եթէ Հասարակութեան մը բարօրութիւնն, կամ լաւ ևս՝ զայն կազմողաց

մէջ բարօրութեան կարելի եղած մեծագոյն ծաւալումն՝ յաւէտ ընկերական կենաց կանոնաւորութենէն չափուած է, Միլանու ռամկապետական վիճակագրութիւնն կը վկայէ՝ որ բնաւ պատճառ մ'ալ չէ այլալայտ յառաջագիմական զարգացման կանոնաւոր պարագայքը՝

Այս զարգացումն և ևս մեծագոյն կ'երևի մեզ՝ եթէ մենք ուշադրութիւն նիս դարձնենք գործոց անցումն շարժման, և հարստութեան յառաջադիմութեան վրայ, ինչպէս կը տեսնենք քանի մը ապացոյցներով։ Ի 1879 միահաձու ածեցնող շարժումն, յարգուն թղթոց և փոխանակագրոց միջոցաւ, որ եկան 'ի Դրամասեղանոց, 'ի Գանձարանէ խնայողութեան, 'ի Տանէ գրաւից, 'ի թղթատարական, հեռագրական և երկաթուղիական ծառայութենէ, երկու միլիարտ և կէս հաշուեցաւ, 'ի բաց առեալ առանձնական Դրամասեղանոց և Սակարանաց շարժումը։ Չկայ յիտաւրա քաղաք՝ որ այսպիսի բարձր թուոյ մը մերձենայ։ Ուրիշ կողմանէ այս 300,000 բնակչօք մտղովուրդն, որ կը ծաւալի 72,112,204 քառակուսի մեզր մակերևութի մը վրայ, տարին 31 միլիոն տուրք կը հատուցանէ, և ստուգագոյնս 14,597,000 լիրայ Տէրութեան, 933,466 լիրայ Գաւառին, և 8,878,841 լիրայ Հասարակութեան, բաց 'ի գործոց վրայ գրուած տուրքերէն, որ կրնան հաշուիլ 6,594,984, այսինքն ամբողջ գաւառին մէջ Հատուցածներուն երեք քառորդը։ Եւ հօս ալ կրնանք ըսել, թէ և ոչ մին 'ի մեր քաղաքաց այսչափ բարձր բաժնի մը կը հասնի, իւրաքանչիւր բնակիչ 103,34 լիրայ հատուցանելով։ Տուրքն մտից կը համեմատին, և մուտքն կը նշակեն բերք, որ ոչ միայն հաստատուն և երազ աճման մէջ են, այլ կ'օգնեն նաև միշտ նուազ անհաւասար հարստութեան բաշխման մը։ Թուոց հետ մէկտեղ արդեանց մտադիւր քննութիւնն անվրէպ կը ցուցնէ մեզի՝ թէ ինչպէս Միլան այսնկատմամբ ալ արդի տնտեսագիտաց եղրակացութիւնը կը

հաստատէ՝ հարստութեան աւելի հաւասարակիւ բաշխման մը հակամիտութեան վրայ, յայն սակս ստուգիւ կրնայ պարծիլ որ իրեն մէջ այնպիսի զօրութեան տարերք կը բովանդակէ, մինչև իրաւամբ արժանի ըլլալ մարդկային բարօրութեան առատաձեռնող և գործօն սկզբնաշարժիչ համբաւոյն։

Որչափ որ աճին քաղաքին գրից առաւելութիւնքն, այնչափ ալ լաւագոյն կ'ըլլան իրեն պայմանքն։ Միլան, շինուած իտալիոյ ամենէն աւելի բազմամարդ և ճոխ գաւառին կեդրոնը, Բոյի մեծ հովտին ամենէն նպաստամատոյց կէտին վրայ, ոչ շատ մերձաւոր և ոչ հեռու գաղղիական, հեղեղեան, ղերմանական, աւստրիական սահմանադիւնէն, և ճենովայի՝ իտալիոյ մեծագոյն նաւահանգստէն, պիտի քաղէ անբաւ օգուտներ ասոր զարգացմանէն և այն վաճառուց տեղափոխութիւններէն որ կոզարտուի նոր ճամբով հօն կը թափին։ Այս ճանապարհաւ, Միլան բնականագոյն կեդրոն կ'ըլլայ ամենայն բերոց, որ հօն կու գան, մէկ կողմէն կեդրոնական Եւրոպայէն, միւս կողմէն ծովու ճանապարհաւ, 'ի հեռաւորագոյն երկիրներէ։ Կանոնաւոր և տնտեսական երկաթուղեաց արդէն այնչափ տարածեալ ցանցի մը միջոցաւ, իրեն աւելի դիւրագոյն պիտի ըլլայ իր այս դիրքէն այնպիսի շահեր քաղել՝ որ ոչ ոք երբեք կը նախատեսէ։

* *

Մենք բնաւին չենք տարակուսիր, որ այս Միլանու և առ հասարակ քաղաքային կենաց մեծամեծ կեդրոնաց զարգացումն՝ ըլլայ բարիք մը, հետևանք և նշան մեծագոյն քաղաքականութեան, տնտեսական բաշխման զարգացման։ Տի Պոնալի և իրեն հետեւողաց նզովքն՝ առաւել քան զթշնամանս Ռուսոյի և իւր դպրոցին՝ զմեզ շարժելու զօրութիւնը չունին։ Ուրիշ կողմանէ անկողմնասէր վիճակագրութիւնն և քաղաքականութեան պատմութիւնն արդարապէս ցուցին նաև դաշտային տուա-

բաժական կենաց ինչ ըլլալը: Գիտենք թէ գեղերն ալ քաղաքաց պէս իրենց միութիւնքը ունին, և վերջնոցս չեն պակսիր առաքինութիւնք, շատ անգամ հզօրագոյնք և օգտակարագոյնք քան զայնս՝ որ դաշտային կենաց առանձնաշնորհութիւն կը համարուին: Ուրիշ կողմանէ, եթէ ծագէին ևս անտի անպատեհութիւնք ինչ, պէտք ենք փոյթ ունենալ անոնց առաջն առնուլ և խափանել զայնս, քան թէ մարդկային յառաջագիմութեան բացայայտագոյն օրէնքներէն միոյն հակառակել ունայն փաղաքշահոյ: Երբ, զոր օրինակ, կ'ըսեն մեզի թէ քաղաքի մէջ բնակելը նութական մարմնոյ աճման յարմար չէ, և կը կրկնեն ետոնին հետ, արք հռոմէոսք և խիզախ գիւնուոսք 'ի հռոմէոսք Ժողովոյ Ժողովոյ, պէտք է որոնել զրոն պատճառս նուաստութեան մը, որ չի միանար քաղաքային ժողովմանց գործոյն հետ, երբ մանաւանդ մանրագին վիճակագրական տեղեկութիւնք կը ցուցնեն թէ ինչպէս այս գործս իր կիրառութեան եղանակէն յառաջ կուգայ, ընտանեաց կենաց խանգարմանէն, արուեստագիտութեան թերութեանէն, առողջապահական յոռի վիճակներէն, մանաւանդ աղքատաց բնակութեանց, առողջարար անդեան մը պակասութեանէն: Ուրիշ կողմանէ նաև այս դիպուածիս մէջ պէտք է հաշուի առնուլ բարոյական ուժոյ զարգացումը, որ նութական մարմնոյ ուժոյն նուազութիւն կը համապատասխանէ, որ կրնայ ուղղուիլ առանց այն մեծ շահը կորսնցնելու: Եւ ընդհանրապէս, նաև այս գործս քննելու ժամանակ, ոչ միայն պէտք է ճշդիւ հաշուել չարեաց գուամար, այլ նաև բարեաց գումարը, որ անկէ կը ծագին: զատուք ուրիշ կերպով կարելի չէ ստանալ, զանոնք արգիւելու կամ պակսեցնելու կարողութիւնն մեր ձեռքն է, գէթ մեծաւ մասամբ:

Մեծամեծ խորհողք, որ իրենց կարծեաց պայծառութիւնը ունայնապար ցնորիւք չեն պղտորեր, միաձայն են այս

եզրակացութեանց մէջ, և մենք իրենց խօսքերովն քան թէ ուրիշ պատճառաբանութեամբ, կրնանք գրուատել Միւլանու զարգացումը: Եիղոյ իրեն չքաղաքային էջերէն զմանս գրեց յիշելու համար՝ միջին դարու քաղաքային կենաց՝ արգի քաղաքականութեան վրայ ունեցած ազդեցութիւնը: և Սղլորիս ցրցուց թէ ինչպէս առանձինն մեծ եղաւ այն յիտալիա: Ու չի գորովիր, ու չի պերճանար՝ մոռածելով ինչ որ Աթէնք, Հռոմք, Ֆիրենցէ այնչափ երկար ժամանակ և միջոց կատարեցին: « Որչափ որ բաղմանան մարդիկ, կ'ըսէ Պիւլը, այնչափ աւելի պիտի վարժին իրենց խորհրդոց առարկայն արտաքոյ քան զմարդկային կեանս չփնտելու, և նուազ ուշ պիտի դնեն այն բնութեան մասնական հանգամանաց՝ որ աշխարհի ուրիշ մասանց մէջ յառաջագիմութիւնք արգիւելցին »: Վերգիլեայ Միլանականք և Տուարաճական երգք կէսների՝ չեն կրնար տնտեսագիտին և քաղաքագիտին միտքը դրաւել քան ըզպատճառաբանութիւնս լուսաւորեալս 'ի պայծառ լուսոյ գործոց, զորս կ'ընծայեն լայնատարր հանճարք, զոր օրինակ, Սղլորադ Միլը և Պատհոյ, Սքէֆը և Տէլի, Մեքլեթոր շիշոյա և կարողոս Գաղգանէոյ: Անգղիացի տնտեսագէտք համամիտ են, և պէտք է այնպէս ըլլան, ցուցնելու թէ ինչպէս ազգ մը երբեք չի կրնար ունենալ երկրագործական ծաղկած ճարտարութիւն մը առանց քաղաքային մեծ բաղմամարդութեան մը: Մեծամեծ քաղաքաց անձան և երկրագործութեան զարգացման մէջ եղած կապակցութիւնն, ինչպէս մարթ է ստուգել 'ի Միլան, և իբրև հակապատկեր 'ի Հռոմք, մասնաւորապէս յայտնի կը տեսնուի 'ի Բրիտանականն Հնդկաստան: Ուսումնական կաճառուց բարձրագոյն դաստիարակութեան, մինչև լուսեաց աղբիւսը, արդարև անգին են օգուտքն զոր 'ի մեծամեծ մարդկային ժողովմանց կը հանէ երկրագործութիւնն:

Արուեստագիտութիւնն կամ վաճա.

աւականութիւնն երկրէն կը յափշտա-
կեն շատ մը բաղուկներ, այլ 'ի փոխա-
րէն կու տան անոր մեքենաներ, մնա-
ցուածոց շահաւէտ ընելու միջոցը, հո-
ղոյն բերօք մեծագոյն հետազօտութիւ-
նը, և ասոնց վրայ դրամադրութիւնքը, որ
լոկ առանձինն կ'ընձեռեն զհաստատուն
միակութիւնը և իրեն յառաջադիմու-
թիւնքը: Նաև ֆիլանճիէրի, ինչպէս
Հիւմ և Էուենկ, քաղաքային կենաց դար-
գացումը վնասակար կը համարէր. այլ
նախ ճիշտ, ապա Գաղղանէոյ, ուզե-
լով յիշել միայն մեր հզօրագոյն պատճա-
ռաբանողքը, չափազանցօրէն իսկ ցու-
ցին, թէ ինչպէս կարելի չէ բանաստեղ-
ծից եռանդան աշխոյժքը առնուլ 'ի նը-
կատի տնտեսական—քաղաքական հաս-
տատուն նիւթոյն վրայ: Ինչուան կէտ
մը կը հասկըցուի, որ գիւղական ժողո-
վրդեան քաղաքի մէջ յորդելը, 'ի
փրանկիա ծանր երկիւղ պատճառեց,
ուր այլ և այլ նահանգաց մէջ ընակ-
չաց իրական նուազութեան մ'առիթ-
եղաւ, և ուրիշ պատճառաց համար:
Բայց յիտալիա, ուր ժողովուրդն շատ
աւելի մեծ անման ընդհանուր գործա-
կից մ'ուռնի, այսպիսի շարժում մը գիւ-
ղից չի վնասեր, մանաւանդ թէ իրենց,
գոնեա անուղղակի ճամբով, օգտակա-
րագոյն կ'ըլլայ:

Քաղաքական անպատեհութեանց,
որ կրնան յառաջ գալ 'ի մեծամեծ ժո-
ղովմանց, մոմտուքը, մեզի անարժան
կ'երևին ազատ ժողովրդեան մը, թէ և
մասամբ մ'անհետ եղած չլլան 'ի պատ-
մութենէ: Կը յիշուին միշտ Բարիզու
ապստամբութիւնքն, և փրանկիոյ պատ-
մութեան վրայ ըրած ազդեցութիւն-
նին: Նաև 'ի Լիոն, նաև 'ի Վիէննա և
այլուր՝ ապստամբութիւնն տիրապե-
տեց քանի մ'օր: Այլ այս կղզիացեալ
գործոց, որպիսիս և ո՞րքան այլս չենք
կրնար դէմը դնել: Գեղն ալ ունեցաւ
իրեն ապստամբութիւնքը, իրեն գիւ-
ղականաց պատերազմունքն, իր վան-
տէաներն, և եթէ 'ի բաղդէ քաղաքակա-
նութեան՝ քաղաքային ապստամբու-
թեանց հաւասար ազդեցութիւն չու-

նեցան, սակայն յայտնի է որ նոյնպէս
ուժգին և վայրենի եղան: Ուրիշ կող-
մանէ, այս յարուցմունքն զլիսաւորապէս
յառաջ եկած կը համարուին վարու-
թեան տեսակներէն, որոց յիտալիա
թերևս ոմանք փափաղին, այլ ոչ ոք կը
վախնայ երբեք դառնալէն: Եթէ Բա-
րիզ կը յիշէ դեռ արհաւիրօք զհասարա-
կութիւնը (Comune), Միլան՝ կը պան-
ծայ իրեն Հինդ աւուրց վրայ: Եւ 'ի հա-
կառակէն, քանի՞ն ազնուագին կար-
գաւորութեան տարերք չեն դիզուիր
այս մեծ քաղաքաց մէջ: Հոն հարստու-
թիւնն ունի ընկերական օրինաւոր ազ-
դեցութիւն մը, ընդհանուր ապահովու-
թիւնն իրաւամբ արգոյ համարեալ է,
և յամենեցունց՝ հասարակաց գործա-
ծութեան ստացուածքն համայնխարհի
ժառանգութիւն մը կը կազմեն, որուն
ամենքը հոգ կը տանին պահպանելու և
աճեցնելու: Աւրնթեր մեծամեծ մո-
լութեանց և մեծամեծ յանցանաց, ե-
ղերանց և թշուառութեանց, կան նաև
բարւոյն մեծամեծ զօրութիւնքն, որուն
յօրինուածոյն և որուն ազդեցութեան
դեռ շատ բան կրնայ պակսիլ, բայց ա-
նոր երթալով յաղթահարիչ գերազան-
ցութիւնը տարակուսի մէջ ձգելը՝ ներե-
լի չէ, առանց գործոց լոյսը չտեսնելու:
Մենք ուրեմն կ'ողջունենք իտալիոյ
տնտեսական մայրաքաղաքին առումը՝
նոյն այն խորիստանաց զգացմամբ՝ որով
Անդղիացիք կը ցուցնեն զյառաջադի-
մութիւնն Լոնտայի, Գաղղիացիք՝ Բա-
րիզու, Աւստրիացիք՝ Վիէննայի, և լա-
ւագոյն ևս Ամերիկացիք՝ Նոր Եօրքի: Կը
նկատենք հոն 'ի գիւտն երեւել յառա-
ջագիմութեանց մեծահանգէս ցոյցը և
ապագային ապահովագոյն երաշխաւո-
րութիւնը, մի և նոյն ժամանակին մէջ
նաև միշտ աւելի պնդակազմ միութեան
մը, միշտ աւելի տարածեալ և աւելի
մեծ հարստութեան և նոր քաղաքակա-
նութեան մը ազնուագին տարր մը՝ ար-
ժանափառ իտալական վերանորոգու-
թեան:

ԱՅԻՒԼԻՈՅ ՊՐՈԴԵՆԱԼԻԻ